

ԼԵԶՎԱՌԾԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Համեմատությունը ոճական հիմնական արտահայտչամիջոցներից մեկն է, որի դեպքում գործ ենք ունենում երկու կամ ավելի առարկաների, երևույթների՝ որևէ հատկանիշի հիման վրա միմյանց համադրման հետ և որի արդյունքում կամ բացահայտվում են այդ օբյեկտների նույնական, ընդհանրական կողմերը, կամ էլ ներկայացվում է դրանցից որևէ մեկի հարաբերական կամ բացարձակ գերազանցությունը մյուսի /մյուսների/ նկատմամբ: Սովորաբար համեմատությունը կազմված է երեք մասից՝ առարկան, որը համեմատվում է, առարկան, որի հետ համեմատվում է առաջին առարկան, և այն հատկանիշը, որի հիման վրա նշված օբյեկտները համադրվում են միմյանց հետ:

Գրաբարի ոճական արտահայտչական համակարգում համեմատություններն ունեն տարբեր առարկաների ու երևույթների միջև զանազան հարաբերություններն արտահայտելու երեք մակարդակ՝ նույնական, բաղդատական և գերադրական: Նույնական աստիճանում իր դրսևորումն է գտնում համեմատող օբյեկտների համանմանությունը, այս կամ այն հատկանիշով նրանց նույնականությունը՝ առանց նրանցից որևէ մեկի նկատելի գերազանցության. "Որ դն է քար ի պարսատիկս" *նման է* առն, որ դն է պատիւ անմտի" /Առակք, ԻԶ, 8/ ; "... և անցեալ *որպէս* զարծուի սրաթև ընդ գետն, և ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն" ընկէց ի մեջ օրիորդին Ալանաց" /Նոր., 179/:

Համեմատության բաղդատական մակարդակում դիտարկվող երևույթներից մեկն անվերապահորեն առանձնացվում է մյուսից /մյուսներից/, ցույց է տրվում նրա մոտ այս կամ այն հատկանիշի ավելի կամ պակաս դրսևորումը՝ համեմատած մյուսների հետ. "Կին ժրագլուխ եթե գտանիցի, *պատուականագոյն* է այնպիսին *քան* զականս պատուականս" /Առակ., ԼԱ, 10/; "Իմ պատասխանիք այդ են, յորում ցանկամ մեռանել, *քան* թէ կալ ուրացութեամբ առանց Աստուծոյ" /Փարպ., 49/; "*Լաւ է* կոյր աչաւք *քան* կոյր մտաւք: *Որպէս* մեծ է ոգի քան զմարմին" *այսպէս* մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց" /Եղ., 14/:

Համեմատության գերադրական մակարդակում արտահայտվում է դիտարկվող հատկանիշի դրսևորման բարձրագույն աստիճանը, ցույց է տրվում, որ այդ հատկանիշը այս կամ այն առարկայի մեջ, մյուսների հետ համեմատած, ներկայանում է առավելագույն ձևով: Օրինակ. "...եւ էր այրն այն ազնուական *քան զամենայն* արեւելեայսն" /Յովք,Ա,3/։ Գրաբարում գերադրական համեմատության համար կիրառվող լեզվական կաղապարներն իրենց քանակով ու

կիրառման հաճախականությամբ թեև զիջում են համեմատության մյուս մակարդակների արտահայտմանը ծառայող քերականական՝ ձևերին, սակայն նույնպես ունակ են լեզվաոճական ուրույն նրբիմաստներ հաղորդել արտաբերվող խոսքին: Դրանում կիսմոզվենք ստորև՝ դիտարկելով համեմատության տարբեր աստիճաններին բնորոշ իմաստային նրբերանգների արտահայտման համար օգտագործվող գրաբարյան հիմնական լեզվական միջոցները:

Գրաբարյան լեզվաոճական արտահայտչական համակարգում առավել տարածում են գտել համեմատության նույնական աստիճանին բնորոշ հարաբերությունների պատկերմանը ծառայող քերականական միջոցները: Տարբեր առարկաների, երևույթների միջև ընդհանրական աղետների պատկերման համար գրաբարում կիրառվում են բազմաթիվ լեզվական կաղապարներ, որոնց խմբավորումն ու դասակարգումը հնարավորություն են ընձեռում առանձնացնել նշված ոճական գործառույթի իրականացմանը միտված հետևյալ հիմնական եղանակները:

ա. Ինչպես և արդի հայերենում, գրաբարում նույնպես նույնական մակարդակի երկանդյան համեմատությունների կառուցման հիմքն են կազմում "նման", "որպես", "իբրև" և նման այս կարգի այլ բառերը¹: Եվ դա հասկանալի է՝ այդպիսի կապակցող լեզվական միջոցների օգնությամբ առավել դյուրին է ներկայացնել համեմատվող երևույթների կամ առարկաների միջև գոյություն ունեցող նույնական հարաբերությունները և ընդհանրական կողմերը: Այսպես. "Բայց երուանդայ շինեալ զքաղաքն իւր եւ փոխեալ անդր զամենայն ինչ յԱրմաւրայ, /.../ *նման* իւրոյ քաղաքին շինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ, եւ անուանեաց Բագարան" /Խոր., 166/: "Եւ ահա լինէի պրծեալ ի չարաթոյն ժանեաց զազանացն, որք յայնմ հետէ դարանամտեալք ի ծածուկ, եւ ըստ անհամար մեծութեան իւրեանց սաստիկ կարասաւ զնեալ բազում յեսան՝ «սրեցին *որպէս* սուսեր զլեզուս իւրեանց, եւ թոյնք իժից էին ի ներքոյ շրթանց»" /Փարպ., 198/, "Եւ բորբոքեաց զթագաւորն *իբրեւ* զհուր անշիջանելի: Եւ սկսաւ կրճտել զատամունսն *իբրեւ* զաւրիասական վիրաւոր" /Եղ., 42/:

բ. Նույնական համեմատությունների լեզվական արտահայտության համար գրաբարում նշանակալի կիրառություն են ստացել կրկնակի կապական բառերի օգնությամբ կառուցված բարդ համադասական նախադասությունները, որոնց կազմի մեջ մտնող պարզ նախադասություններից յուրաքանչյուրը ներկայացնում է համեմատության մի եզրը: Նման կառույցներում օգտագործվում են "իբրեւ... նոյնպէս", "իբրեւ ... այնպէս", "որպէս ... այնպէս", "որպէս նոյնպէս" գույգ կապական միավորների վրա խարսխված շարահյուսական կառույցները: Այսպէս. "*իբրեւ* սուսեր եւ սլաք սրեալ, *նոյնպէս* եւ այր որ վկայէ

¹ Տե՛ս Եզեկյան Լ.Վ. Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2003, էջ 342:

գրադեկամէ իւրմէ վկայութիւն ստութեան" /Առակ., ԻԵ, 18/; "...որպէս հաստատուն եւ ճշմարիտ կացեալ են յիւրեանց դեմին, *նոյնպէս* եւ առ մեզ լաւագոյն քան զամենայն կեշտսն նոքա երեւեալ են" /Եղ., 83 /; "*Որպէս* զձայն փշոց ի ներքոյ կաթսայի" *այնպէս* ծաղր անմտաց" /Ժող., Է, 7/; "*Իբրեւ* շուշան ի մէջ փշոց, *այնպէս* մերծաւորդ իմ ի մէջ դստերաց" /Երգ երգոց, Բ, 2/; Նման զուգադիր կապական կառույցներով նախադասութիւններ ռճական արտահայտչականութեան հիմքում ընկած է զուգահեռականութեան երևոյթը. այսպիսի կառույցները հնարավորութիւն են ընծեռում զուգահեռաբար, կողք-կողքի դիտարկել համեմատվող երևոյթներն ու օրելկոյնները, որի շնորհիվ առավել տեսանելի են դառնում նրանց միջև գոյություն ունեցող ընդհանրական կողմերը: Գրաբարին հատուկ են նաև շարահյուսական այնպիսի կառույցներ, որտեղ օժանդակ բայի առկայութեան շնորհիվ կապական նշված զուգադրութիւններից մեկն ստանում է ստորոգյալի պաշտոն՝ չդադարելով կատարել նույնական համեմատութեան իր ռճական հիմնական գործառնութիւնը: Օրինակ. "Որ պատմէ զբանն այնմ, որ ոչ անսայ" *այսպէս է՝* որ զարթուցանէ զքնած ի խոր քնոյ" /Սիրաք, ԻԲ, 8 /:

գ. Գրաբարյան նույնական համեմատութիւնների լեզվական արտահայտման ձևերից մեկն էլ "օրինակ" գերադաս անդամով կազմված բառակապակցութիւններն են, որոնք ևս հնարավորութիւն են տալիս ընթերցողին՝ ըմբռնել նկարագրվող տարբեր իրադարձութիւնների, երևոյթների նման հատկանիշները: Դասական գրաբարում այդ գործառնութիւն իրականացման համար հաճախ օգտագործվում են "ըստ նմին օրինակի", "զօր օրինակ" շարահյուսական կառույցները: Այսպէս. "Որպէս Սողոմն եւ Գոմոր, /.../ *ըստ նմին օրինակի* եւ սոքա զմարմին պղծեն, զտէրութիւնս քամահրեն, զփառսն հայհոյեն" /Թուղթ Յուդայի, 8/; "*Զոր օրինակ* պատուիրեց Տէր մովսիսի, նոյնպէս արարին որդիքն Իսրայելի" /Յեսու, ԺԴ, 5 /: Այս լեզվական կաղապարն իր քերականական բովանդակությամբ նման է նախորդին և նույնպէս նպատակամիտված է զուգահեռականութեան միջոցով դիտարկվող տարբեր հատկութիւնների ընդհանրական կողմերը ընթերցողին առավել տեսանելի դարձնելու գործառնութիւն իրականացմանը: Ավելին, առանձին դեպքերում համեմատութեան երկու բևեռների քերականական արտահայտութիւնն էլ իրականացվում է հիշատակված գերադաս անդամն ունեցող բառակապակցութիւնների միջոցով: Այսպէս. "Զի *զոր արինակ* ի ծեռն կուսին առաջնոյ Եւայի մահ եմուտ յաշխարհ" սոյն *արինակ* եւ ի ծեռն այսր կուսի կեանք մտցեն յաշխարհ: /Ազաթ., 58/:

դ. Նույնական համեմատութեան համար գրաբարում օգտագործվում է նաև "համարիլ" բայն իր դիմավոր ձևերով, որոնք հաճախ զուգակցվում են "որպէս, իբրեւ" կապական միավորների հետ: Դժվար չէ համոզվել, որ նման շարահյուսական կառույցները ևս նպաստում են տարբեր առարկայական տիրութիւնների ընդհանրական կողմերի բացահայտմանը. "Ես ... *որպէս* անասուն *համարեցայ*

առաջի քոյ" /Սաղմ., 3Բ, 23/; "*Իբրեւ* ատարացեալ իմն *համարէր* զանձն կողմանցս այսոցիկ" /Սակ., 2, Դ, 21/:

ե. Գրաբարյան նույնական համեմատությունների լեզվական արտահայտման ժամանակ հանդես են գալիս նաև "մման" արմատից կազմված տարբեր քերականական ձևերը, որոնք ամենից հաճախ կատարում են տվյալ նախադասության խոնարհված ստորոգյալի կամ էլ ստորոգելական վերադիրի գործառույթ՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով համեմատության ընդհանրական եզրեր գտնել ամենատարբեր իրերի ու երևույթների միջև: Այսպես. "Եւ դուք *մմանողք* մարդկան որ ակն ունիցին տեառն իւրեանց թէ երբ դառնայցէ ի հարսանեաց" /Ղուկ., ԺԲ, 36/; "Դարձի'ր *մմանեաց* դու, եղբորորդի իմ, այծեման կամ որթուց եզանց ի վերայ լերանց խնկաբերաց" /Երզ երզոց, Բ, 17/:

զ. Նույնական համեմատությունների կատարման համար գրաբարյան գործածական կառույցներից մեկն էլ "ըստ" նախդիրի օգնությամբ կապակցվող բառային միավորներից կազմված շարահյուսական կաղապարներն են, որոնք նույնպես ունակ են պատկերել համեմատության տարբեր թևերն ու նրանց միավորող ընդհանրական հատկանիշները: Օրինակ. " խնամարկեալ սիրեաց զԿամսարականն Արշալիր *ըստ սիրոյն Յովնաթանայ* զԴաւիթ. յաղագս եւ այլոց նախարարացն Դայոց հոգայր բարեխօսութեամբ հանապազ" /Փարսպ., 108/; "Այլ երանի թէ եւ դուք *ըստ բժշկական արուեստին* բերէիք զմամուքիւն. զի ոչ փոքր է ճշարտութիւն նոցա բժշկութեանն" /Եղ., 171/:

է. Գրաբարյան նույնական համեմատությունների ուրույն ոլորտ են կազմում առանց կապական բառերի իրականացվող համեմատությունները, երբ առաջին պլան են մղվում անվանական բաղադրյալ ստորոգյալ ունեցող շարահյուսական կառույցները: Այսպիսի նախադասությունների առանձնահատկությունն այն է, որ ենթակայի և ստորոգյալի բևեռները ներկայացնում են նույնական համեմատության տարբեր եզրերը, որոնք թեև միմյանց հետ կապված չեն համեմատությանը բնորոշ սովորական եղանակով և ձևական արտահայտման դիտանկյունից շատ մեծան են փոխաբերությունների, սակայն "...դրանք ըստ էության համեմատություններ են: Այդպիսի կառույցներում համեմատության միջոց է դառնում անվանաբայական ստորոգյալը, որովհետև այն մմանեցվում, հավասարեցվում է ենթակային"²: Բերենք նույնական համեմատության գործառույթ իրականացնող մմանատիպ շարահյուսական կառույցների մի քանի օրինակ. "Խոտ է ժողովուրդս այս" /Եսայի, Խ, 8/; "Ես եմ պարիսպ, եւ ստիճք իմ իբրեւ զաշտարակս. ես էի յաչս նորա՝ որպէս որ գտանիցէ զխաղաղութիւն" /Երզ երզոց, Ը, 10/; "Ողկոյզ նոճոյ է եղբորորդին իմ ինձ, ի մէջ այգեստանեացն ենգաղայ" /Երզ երզոց, Ա, 13/:

² Մարության Ա.Ա. Դայոց լեզվի ոճաբանություն. Եր., 2000, էջ 160:

ը. Համեմատաբար ավելի սակավադեպ են գրաբարի ձևաբանական մակարդակում գործառնող լեզվական միավորների՝ ձևայինների օգնությամբ իրականացվող նույնական համեմատության դրսևորումները: Այս դեպքում առավելապես գործ ունենք ածանցների օգնությամբ համեմատության երևույթի հետ, երբ գրաբարյան համապատասխան վերջածանցները, կցվելով բառարմատին, հստակորեն մատնանշում են ինչպես համեմատության մյուս եզր հանդիսացող օբյեկտը, այնպես էլ այն հատկանիշը, որի հիման վրա կատարվում է տվյալ համեմատությունը: Նման ոճական գործառնության իրականացման համար գրաբարում հիմնականում կիրառվում են «-ապես», «-աբար» վերջածանցները, որոնք, ինչպես հայտնի է, քերականական մակարդակում ունակ են ներկայացնել տարբեր երևույթների համեմատելի ընդհանրական եզրերը՝ արտահայտելով «իբրև», «նման», «որպես» իմաստային նրբերանգները³: Այսպես. «Ի ծայն բարձր գոչեր *առիծաբար*, ասելով, թե «Մարդոյ հաւատացելոյ միում յերկուց վրիպել անհմար է, եւ դիպմունք երկոքեան մեծարգոյ են եւ պատուական. » /Փարպ., 151/; «Պատմի եւ այս, թէ զկնի այսպիսի իրաց կատարան՝ յուղարկէ *թագաւորապէս* զքոյր իւր Տիգրանուհի մեծաւ ամբոխիս ի Հայս, յաւանն՝ զոր շինեաց յիւր անուն Տիգրան, որ է Տիգրանակերտ» /Խոր., 82/:

Գրաբարում բաղդատական համեմատության արտահայտման համար, ինչպես և նույնական համեմատության դեպքում, կիրառվում են ինչպես ձևաբանական, այնպես էլ շարահյուսական եղանակներ: Բաղդատական համեմատությունը, որի դեպքում ցույց է տրվում համեմատության կողմերից մեկի ակնհայտ առավելությունը, գերադաս վիճակը մյուսի նկատմամբ, գրաբարում առաջին հերթին դրսևորվում է ածականի ուղիղ ձևի վրա հատկանիշի «-գոյն» սաստկացնող քերականական նրբիմաստն ունեցող ածանցի հավելադրմամբ: Ի տարբերություն աշխարհաբարի, որտեղ ածականին սերտաճող «-գույն» վերջածանցը բառին տալիս է գերադրական համեմատական նրբիմաստ, գրաբարում հիշյալ մասնիկը բաղդատական նրբիմաստ է հավելագրում ածականին, որի շնորհիվ համեմատայալը որոշակի գերազանցություն է ստանում համեմատելիի նկատմամբ: Այսպես. «*Ծանրագոյն* քան զիս է բանդ /Թիւք, ԺԱ, 14/; «Լեր *իմաստնագոյն* եւս քան զնա» /Առակք, 2, 7/; «Քար ծանր է, եւ աւագ դժուարին ի բառնալ. բայց բարկութիւն անզգամի *ծանրագոյն* է քան գերկոսեան» /Առակք, ԻԷ, 3/; Միևնույն ժամանակ հանդիպում են դեպքեր, երբ «*գոյն* ածանցով կազմված ածականներն արտահայտում են գերադրական իմաստ»⁴. «Յառաջագոյն գիտեն ի վաղուց հետէ, եթէ կամիցին վկայել, զի ըստ *ճշմարտագոյն* կրօնիցն օրինացն մերոց կեցեալ են փարիսեցի» /Գործք, ԻԶ, 5/; «Վասն նամակին որ քո ի

³ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ասատրյան Մ.Ե. Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն.-Եր., 2002, էջ 341:

⁴ Ավետիսյան Հ.Մ., Դազարյան Ռ.Ս. Գրաբարի ձեռնարկ. Եր., 1986, էջ 143:

մեր աշխարհս տուեալ էր՝ առաջ ժամանակաւ մի ոմն ի մոզպետաց, որ *կատարելագոյն* էր ի դէմիդ ծերում հաւատաց յԱստուած կենդանի՝ յարարիչն երկնի եւ երկրի, եւ բան առ բան ելոյծ եւ իմացոյց ձեզ զաւրեմն ծեր " /Եղ., 29 /: Ինչպես դժվար չէ նկատել, վերջին դէպքերում ածականները ձեռք են բերել գերադրական իմաստ, որովհետեւ համեմատութեան բնեռներից մեկի բացակայութեան պարագայում համեմատելիին վերագրվող հատկանիշն ստացել է ընդհանրական հնչեղութիւն:

Գրաբարում բաղդատական համեմատական նրբիմաստ արտահայտող մյուս լեզվական հնարը "քան" կապական բառի կիրառութիւնն է: Վերջինս դրվում է հատկանիշ ցոյց տվող բառից հետո, որին հաջորդում է համեմատելին՝ դրված հայցական հոլովով. "Ձուարթագին են աչք նորա ի գինւոյ եւ սպիտակ ատամներն նորա *քան զկաթն*" /Ծննդ., ԽԾ, 12 /: "Ձոչխարսն լառաւել *քան զհովիւս* բանաւորս արարեր" /Փարպ., 216/: Այս նախադրութիւնը կարող է բաղդատական համեմատական գործառնութիւն իրականացնելու համար միմյանց կապակցել ոչ միայն առանձին բառեր ու բառակապակցութիւններ, այլև ամբողջ նախադասութիւններ. այդ դէպքում նախադասութիւններից յուրաքանչ-յուրն արտահայտում է համեմատութեան բնեռներից մեկի բովանդակութիւնը: Այսպես. "Յանկամ մեռանել, *քան թէ* կալ ուրացութեամբ առանց Աստուծոյ" /Փարպ., 49/: "Եղեն բազումք այնոքիկ որ մեռան ի քարանց կարկտին, *քան* այնոսիկ զորս կոտորեցին որդիքն Իսրայելի" /Յեսու, Ժ, 11/:

Բաղդատական նշանակությամբ գրաբարում ավելի շատ հանդիպում են "լավ է քան", "բարի է քան" շարահյուսական կառույցները, որտեղ առաջին բաղդադրիչը ներկայացնում է գերադասելի որակական հայտանիշ ունեցող համեմատութեան բնեռը, իսկ մյուս բնեռի լեզվական արտահայտութիւնն սկսվում է "քան" նախդիրից հետո. "*Լաւ է* իմաստուն քան հզօր, եւ հանճարեղ" *քան* զայն որ ունիցի դաստակերտս մեծամեծս" /Առակք, ԻԴ, 5 /: "*Բարի են* ստինք քո *քան* զգինի: Եւ *հոտ* իւրոց քոց *քան* զամենայն խունկս" /Երգ երգոց, Ա, 1-2/:

Ուշագրավ է, որ համեմատվող տարբեր երևութների միջև տարբերութիւնները, նրանցից մեկի առավելութիւններն ավելի ցայտուն ընդգծելու համար գրաբարում լայնորեն կիրառվել են նաև համեմատութեան հետ զուգակցվող հակադրութիւններ, որոնք ավելի պատկերավոր են դարձնում ներկայացվող բաղդատման տարբեր կողմերը, օգնում ընթերցողին ավելի ոյրորին ընկալել ուրվագծվող գեղարվեստական պատկերը: Այսպես. "*Լաւ է* բարեկամ մերձաւոր" *քան* զեղբայրս հեռաւոր" /Առակք, ԺԸ, 24 /: "*Լաւ է* բուռն մի հանգստեամբ *քան* զլիութիւն երկուց բռանց՝ քանալով եւ յօժարութեամբ ոգւոյ" /Ժող., 6/: Առանձին դէպքերում համեմատութեան կողմերից մեկը կարող է նաև հանդես գալ զեղչված ձևով, սակայն նման դէպքում եթե ոչ բացահայտ, ապա ներակա /իմպլիցիտ/ ձևով այն այս կամ այն կերպ դրսևորվում է. "*Լաւ էր* եթէ մեռեալ

էաք յերկրին եգիպտացոց" /Թիւք, ԺԴ, 2/՝ զեղչվել է " քան եթէ ապրեաք աստի " համեմատութեան մյուս եզրն արտահայտող նախադասութիւնը; "*Լաւ էր* նմա թէ չէր իսկ ծնեալ մարդն այն " /Մարկոս, ԺԴ, 21/՝ այստեղ նույնպէս զեղչված նախադասութիւնը դուրսին է վերականգնել՝ "...քան թէ ծնեալ էր":

Գրաբարում հաճախ համոզիպում են նաև բաղդատական շարահյուսական կառույցների շրջուն լեզվական դրսևորումները, երբ ածականով արտահայտվող անվանական ստորոգյալը նախորդելու փոխարեն հաջորդում է կապական բառի վրա խարսխված բառին կամ նախադասութեանը: "Ողջութիւն և բժշկութիւն քան զոսկի *լաւ է* " /Սիրաք.Լ, 15 /; "*Քան* զթշնամիս իմ իմաստուն արարեր զիս" /Սաղմ., ԾԺԸ, 98/; "*Քան* զամենայն ուուցիչս իմ իմաստուն եղի " /Սաղմ., ԾԺԸ, 99 /:

Առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում նաև բաղդատմանը միտված այն համեմատութիւնները, որոնց բաղադրիչներից մեկը համոզես է գալիս հռետորական հարցի տեսքով: Հատկանշական է, որ նման դեպքերում թեև հռետորական հարցով արտահայտված նախադասութիւնը պատասխան չի պահանջում, սակայն վերջինիս պատասխանը համոզիացող նախադասութիւնն այնուհանդերձ կարծես թէ մասնակցում է բաղդատական համեմատութեան բաղադրիչի կազմավորմանը.. " Զին"չ բարձր և ստուար *քան* զիրամանս Աստուածութեանն կայցէ " /Ագաթ., 34/ ; "Ընդէ"ր իսկ անցոյց ծառայ քո զժողովուրդս ընդ Յորդանան, *լաւ էր* թէ անդէն զետեղեալ և բնակեալ էաք " /Յեսու, է, 7-8/:

Անդրադառնաք այն համեմատութիւններին, որոնք արտահայտում են գերադրական իմաստ, այսինքն մատնանշում են մի այնպիսի հատկութիւն, որը դրսևորվում է հնարավոր բարձրագոյն ձևով՝ այնպէս, որ մեկ ուրիշ օբյեկտ չի կարող ունենալ տվյալ հատկանիշը գերազանցելու ունակութիւն: Ինչպէս հայտնի է, ածականը գրաբարում զուրկ է գերադրական իմաստ արտահայտելու հատուկ ձևական կաղապարից. այդ նրբիմաստին մոտ քերականական իմաստ կարելի է արտահայտել "կարի", "յոյժ", "սաստիկ", "անհնարին" մակբայների միջոցով. այսպէս. "Զի թեպէտ եւ *կարի յոյժ* բազմացաւ աղաղակն, դատ չկայր" /Բուզանդ, 91/; "զբանս իմ *յոյժ* փտործիւք եւ պատուականութեամբ ընդունին, որպէս եւ զառողջ վարդապետի, եւ պատուին որպէս եւ զհայր" /Փարպ., 195/։ Դրա հետ մեկտեղ գրաբարում առկա է մի ուշագրավ շարահյուսական կառույց, որն ավելի ցայտուն ու ակնհայտ կերպով է դրսևորում համեմատութեան տվյալ բևեռի գերադաս բնույթը. այն բնորոշվում է "հատկանիշ + քան զամենայն" կառուցվածքով: Այսպիսի շարահյուսական կաղապար ունեցող համեմատութիւնն աներկբայորեն արտահայտում է գերադրական իմաստ՝ "քան զամենայն" բառակապակցութիւնը մատնանշում է, որ տվյալ հատկութիւնը տվյալ օբյեկտին բնորոշ է մյուսների համեմատութեամբ առավելագոյն

ծնով. "Եւ էր այրն այն *ազնուական քան զամենայն*՝ Թոր, Ա, 3/; "Որպէս վարագի՝ որ *զազանագոյնն է քան զամենայն* գազանս՝ ուտի միսն, և ոչ վնասէ. նոյնպէս և նորայն՝ եթե ուտէր ոք՝ չվնասէր" /Եզն., 67/: Դժվար չէ համոզվել, որ "քան զամենայն" բառակապակցութիւնը առկա հատկանիշին վերագրում է գերադաս ու գլխադասային բնույթ, որից առավել մյուս բոլոր օբյեկտներն ու երևոյթները չեն կարող ունենալ այդ հատկութիւնը:

Բացի վերոհիշյալից, գրաբարում գերադաս իմաստ կարող է արտահայտվել նաև նույնարմատ "հոգնակի սեռական+ուղղական ածական" զուգադիր կիրառութեամբ: Օրինակ, աստվածաշնչյան ոսկեղենիկ դասական թարգմանութեան մեջ հանդիպում ենք. "...անջրպետիցէ ձեզ վարագոյրն ի մէջ սրբութեանն եւ ի մէջ *սրբութեանց սրբութեան*" /Ելք, ԻԶ, 33/: Համապատասխան եբրայական բնօրինակի բառացի անգլերեն թարգմանութիւնը միանշանակորէն վկայում է, որ վերջին բառակապակցութիւնը մատնանշում է ամենամեծ սրբութիւնը, որը հակադրվում է սովորական սրբութիւններին⁵: Հասկանալի է, որ բնագրին առավելագոյնս հարազատ մնալուն ձգտող ոսկեղարյան հայ թարգմանիչը չէր կարող անտեսել գերադրական իմաստի արտահայտման՝ բնօրինակում տեղ գտած նպատակադրվածութիւնը, և այստեղից տրամաբանորէն կարելի է եզրակացնել, որ նույնարմատ "հոգնակի սեռական+ուղղական ածական" բառակապակցութիւնը իմաստով համապատասխանում է այդ ածականի գերադրական աստիճանին: Ընդհանրապէս, կրկնվող նույնարմատ բաղադրիչները, ամենայն հավանականութեամբ, գրաբարյան խոսքին գերադաս բնույթ են հաղորդում, եւ հավանաբար հենց գրաբարյան նման կաղապարների՝ աշխարհաբարին փոխանցվելու շնորհիվ է, որ արդի հայերենում նույնպէս հոգնակի սեռականի կամ բացառականի ձևով ածականի կրկնութիւնը գերադրականի իմաստ է արտահայտում⁶: Այս հանգամանքը մեզ թույլ է տալիս ընդհանրապէս նոր լուսի տակ դիտարկել կրկնութեան ձևով հանդես եկող գրաբարյան լեզվաոճական նրբիմաստները:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ամենատարբերութեամբ համեմատական նրբիմաստներ արտահայտելու համար գրաբարն ունի բազմապիսի քերականական լեզվաոճական կաղապարներ, որոնք զգալի արտահայտչականութիւն են հաղորդում մեր հնադարյան հայոց լեզվին:

⁵ St'u Young R. Young's Literal Translation of the Holy Bible, Exo. 26,33, London, 1986:

⁶ St'u Ասատրյան Մ.Ե., նշվ.աշխ., էջ 137: